

տեղւոյն կայսերական բանակին, եւ զինուորական հիւանդանոցին:

Տաթ. Բառլատիւան, գրեթէ տասը տարի շարունակ կը մնայ Պաղտատ, ուր՝ որչափ որ կը սկսի իւր բժշկական ժիրաժիր գործունէութեամբն երեւելի հանդիսանալ, միանգամայն կը սկսէր տեղւոյն տաք կլիմայէն գէշ ազդուիլ. այնչափ որ, կը հիւանդանայ շատ, ուստի կը ստիպի թողուլ Պաղտատը՝ և Պոլիս գաւնալու յուսով, եւ ճամբան՝ վիճակն աւելի ծանրանալով կը վախճանի Նիսիայի (Մծրին) մէջ կարծեմ, հեռի իւր հայրենիքէն, հեռի իւր սիրելիներէն, հեռի իւր ընտանիքէն:

Միշտ գրսերն անցուցած կեանքը, մանաւանդ հիւանդութիւնները, պատճառ եղած են, որ Բառլատիւան բնաւ միջոց եւ ասպարէզ չէ ունեցած որ եւ է գործառնութեամբ փայլելու:

Ինքը՝ որ Բառլատի Պէյ անուամբ ճանչցուած է եղեր ժամանակին, ուսեալ, բարեկիրթ, հմուտ եւ ջերմ ազգասէր, ինչպէս կը պատմեն այսօր իրեն ժամանակակից եւ հասակակից անձեր, անշուշտ պիտի կարենար այլեւայլ կարեւոր գործերով նշանաւոր հանդիսանալ, ինչպէս իւր ընկերները, եթէ միշտ ժամանակը յարմար միջավայրի մէջ զայն թողուր, եւ անագորոյն մահը չկարճէր անոր կենաց թելը:



ԲԱՐՄԱԿՅ ԲԱՐՄԱԿՅԱՆ ՍՊԱՐՈՒՄԻՆ

Բառլատիւանի մէկ գիրը, զոր անոր մէկ ազգականը տուած է ինձ վերջերս, կը կրէ 1873 10/22 Յունուար թուականը, գրուած է Պաղտատէն եւ կը պատմէ անոր կենաց վերջին ատենները: Քանի մը տող նոյն նամակէն կարեւոր կը համարիմ յիշատակել հոս, գոնէ անոր զգացումներուն մասին գաղափար մը տալու համար:

Նամակը ֆրանսերէն է, զոր ուղղելով ֆրանսացի բարեկամի մը, Բառլատիւան կը գրէ,

„Jusqu'ici je n'ai souffert que d'un panaris à l'index de la main gauche, du reste ma santé est assez bonne; cependant la vie à Bagdad me peine beaucoup et me rend maussade et triste, je ne pense qu'à ma famille et surtout à ma légitime, ma très chère légitime, sans elle la vie me semble une suite de torture. Oh malheureux sort qui me sé-

pare si cruellement d'elle à deux reprises. Impossible pour moi de patienter pour plus longtemps, il faut que j'essaye tous les moyens pour me rendre auprès d'elle (des démarches à cet effet seront faites) au printemps s'il plait à Dieu.“

Թարգմանութիւնը.

“Մինչեւ ցարդ միայն ձախ ցուցամատիս վրայ վէրք մը հանեցի, առողջութիւնս բաւական լաւ է, միայն Պաղտատի կեանքն է որ զիս շատ կը նեղէ, եւ ինձ զզուանք ու տխրութիւն կը պատճառէ. խելքս միտքս միայն ընտանիքիս վրայ է, մանաւանդ իմ կենակից ու սիրական կնոջս վրայ. առանց անոր, կեանքն ինձ տանջանքներու շարք մը կը թուի, անողորմ բախտ որ երկիցս բաժանեց զիս անկէ անգթաբար: Ա՛յ անկարելի է ինձ համբերել այս կենացս. պէտք է որ ամէն միջոցի գործ դնեմ անոր քով դառնալու. համար յառաջիկայ գարնան՝ եթէ Աստուած ուզէ, առ այս պէտք եղածը պիտի ընեմ:”

Բառլատիւանի վերջին գիրն է այս, 1873 Յունուար 10/22-էն ետքն իրմէ բնաւ լուր եկած չէ իրեններուն, որով՝ եթէ ընդունինք թէ՛ նոյն տարւան գարնան ճամբայ ելաւ և Պոլիս դառնալու մեռած կ'ըլլայ 1873 ի Մայիսին կամ Յունիսին.

Բառլատիւանի աղնիւ սրտին յայտարար չէն այս տողերը, խեղճը որչափ կը նեղուի եղեր Պաղտատի մէջ, եւ ի՞նչ սէր կը յայտնէ, ի՞նչ անձուկ իւր կողակցին համար զոր վերջին անգամ մը գոնէ տեսնելու արժանի չ'ըլլար դժբախտութեամբ:

Բառլատիւան ամուսնացած էր Վանթաբեան Յովհաննէս Էֆէնտիի աղջկան հետ. մեռած է անդաւակ, եւ թողած չէ ուրիշ յիշատակ, որով կարենայինք աւելի ծանօթ ըլլալ իւր կենաց:

Բարեբախտութիւն մըն է, որ գոնէ կ'ունենանք անոր պատկերը, զոր ներկայացընելովս չեմ վարանիր ըսելու թէ՛ սա մեղամաղձիկ խոհուն գէմբը, սա բարձր ճակատը, եւ անոյշ հայեացքը յայտարար են չքնաղ եւ ընտիր ձիւքերով օժտուած խելացի մարդու:

Բնութ, Տ. Նոյնիսէր 1899:

Տղթ. ՎԱՆԴԱՄ Յ. ԹՈՐԳՈՄԵԱՆ